

ՄԱՍԻՍ

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՄԱՏԹԷՈՍ ՄԱՄՈՒՐԵԱՆ

Իբր հրապարակագիր էլ գրագե . ԱՐԳՈՍ

ԽԹՈՒՄԻ ԳԻՇԵՐԸ ՄՈՒՇԵՂ ՎԱՐԴԱՊԵՏ

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐ

Անուշ (Արման Սիլվեստր),

Այգերը (Ժան Էփան) . . ԹԱՐԳԱՆ ՍԻՊԻԼ

ՎԱՐԴԸՆՇԹԱՅՆ ՏՈՐԹ. Վ. ԹՈՐԳՈՄԵԱՆ

ԱՄՍԱԹԵՐԹ ՄԸ ԻՆՉՊԷՍ ԿԸ ԽՄԲԱԳՐՈՒԻ

(*Ամերիկեան լաւերե*) THE COSMOPOLITAN

ԸՆԴՀԱՏՈՒԱԾ ԵՐԳԸ (*Նորայկայ*) . . ՏԻԳՐԱՆ ԱՐՓԻԱՐԵԱՆ

«ՄԱՍԻՍ»-Ի ՊԱՏԿԵՐՆԵՐԸ

«Մասիս»-ի ներկայ թիւը կը պարունակէ ՄԱՏԹԷՈՍ ՄԱՄՈՒՐԵԱՆԻ երիտասարդութեան (1868) ի պատկերը, «Արգոս»-ի գրական ուսումնասիրութեանը առթիւ :

49^{րդ} ՏԱՐԻ, ԹԻՒ 2

8 ՅՈՒՆՈՒԱՐ 1900

ՏԵՕՐԷՆ—ԽՄԲԱԳՐՈՒ

ՏԻԳՐԱՆ ԱՐՓԻԱՐԵԱՆ

Կ. ՊՈԼԻՍ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Ե. ՄԱՏԹԷՈՍԵԱՆ

Յ Ա Յ Տ Ա Ր Ա Ր ՈՒ Թ Ի Ի Ն

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ «ՄԱՍԻՍ»Ի

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆ. — Մասիս պատկերազարդ շաբաթաթերթի տարեկան բաժանորդագրինն է կէս օսմ. ոսկի թէ Կ. Պոլսոյ և թէ գաւառներուն համար անփոփոխ. Արտասահման՝ 12 ֆրանք: Վեցամսեայ կամ եռամսեայ բաժանորդագրութիւն չընդունուիր: Բաժանորդագրութիւնները կը հաշուին 1900 Յունվար 1է մինչեւ Դեկտեմբեր 31, մէկ տարեջրջանի համար:

ՀԱՍՅԷ. — Մասիսի վերաբերող նամակ, գրամ, գիրք և այլն պէտք է ուղղել հետեւեալ հասցէին

Խ Մ Բ Ա Գ Ր Ո Ւ Թ Ի Ի Ն «Մ Ա Ս Ի Ս» Ի

Հայասթիս, Նորասունկեան Խան, Թիւ 13

ուր կրնան գիմել ամէն անոնք որոնք Մասիսի Խմբագրութեան հետ անձամբ կարգադրուելիք որ և է գործ մը ունին:

ԾԱՆՈԹՅՈՒՄՆԵՐ կ'ընդունուին ամէն տեսակէ, գրեհական, առեւտրական, ազահովագրական և այլն:

ԱՆՎՃԱՐ նամակ կամ ծրար կը մերժուի: Հրատարակութեան անյարմար դատուած ձեռագիրները ետ չեն դարձուիր:

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ որոնցմէ երկու օրինակ ղրկուին Մասիսի Խմբագրութեան՝ կը ծանուցուին թերթին մէջ:

ԳԱԻԱՌՆԵՐՈՒ ՄԷՁ բաժանորդագրիները կրնան յանձնուիլ Գործակալներուն որոնց անունները պիտի հրատարակուին յաջորդաբար: Կրնան նաև ուղղակի Խմբագրութեան ղրկուիլ նպակագրօշմով կամ փոխանակագրով:

ՄԱՍԻՍ հրապարակ կ'ելլէ ամէն շաբաթ առաւօտ կանուխ, և կը գտնուի Բերայի բոլոր ծխավաճառներուն ու Պահլէ-գաբուի ջրավաճառներուն խանութները, ինչպէս նաեւ Ղալաթիոյ, Պոլսոյ և բոլոր արուարձաններու լրագրավաճառներուն քով:

Ձեռքէ կը ծախուի ՀԱՏԸ ԲԱՌՍՈՒՆ ՓԱՐԱՅԻ:

Կիսամսեայ Մասիսի մէջ սկսուած Հէնրիք Իպսէնի Ուրուականներ թատերադրութեան մնացորդ մասին թարգմանութիւնը ամբողջովին պիտի հրատարակուի ի մօտոյ շաբաթաթերթ Մասիսի միջոցաւ, առանց սակայն մաս կազմելու մեր 16 էջերուն:

ՄԱՍԻՆ


49^{րդ} ՏԱՐԻ

8 ՅՈՒՆԻՍԿԱՐ 1900

ԹԻՒ 2

ՄԱՄՈՒՐԵԱՆԻ ԴԵՐԸ

ԻՐ ՇՐԱՊԱՐԱԿԱԳԻՐ ԵՒ ԳՐԱԳԷՏ



ԱՐԴԿՈՒԹԵԱՆ իտէական
երջանկութիւն մը հայ-
թայթելու հաւատքին ներ-
շնչումովը՝ գերագոյն դո-

բացատրել հիմակուան գաղափարներով եւ
համոզումներով, եթէ հաշուի չառնենք ժա-
մանակի եւ միջավայրի պարագաները, առանց
որոնց արդէն կարելի չէ ուղիղ գատողու-
թիւն կազմել որ եւ է անցեալ դէպքի՝ ծաւալ-
մանը, ինչպէս հանրային մարդու գործունէու-
թեանը վրայ:

Հոս տեղը չէ քննելու թէ որքան մարդ-
կային (humain) էին այն
շարժառիթները՝ որոնք
վիպականութիւնը ստեղ-
ծեցին: Բնապաշտութիւ-
նը (naturalisme) որ յա-
ջորդեց անոր, այնքան
նպաստաւոր ազդեցու-
թիւն մը չունեցաւ մարդ-
կութեան ճակատագրին
վրայ, որպէս զի արժէ
ձողկել առջինին տկար
կողմերը: Ակնհերեւ է թէ
պատմութեան յարմարաց
ծաւալումը տեղի կ'ունե-
նայ տեղատուութիւննե-
րու, մակընթացութիւննե-
րու շարունակութեանը
մը, որոնց մէջ նկատելի է
միշտ մարդկութեան դէպի
կատարելութիւն ձգտու-



հողութիւններու երկուն-
քի մը մէջ ծնող այս 19րդ
դարը, որ նիւթական շա-
հերու՝ ամէնէն սահմանա-
փակ ըմբռնումովը կը վեր-
ջանայ, հողեկան տենչե-
րու եւ երեւակայութեան
թռիչքի միջնարար մը ու-
նեցած է իր կիսուն ա-
տենները՝ որու միջոցին
վեհանձն զգացումները հա-
շիւին տեղը բռնած են,
մինչդեռ երեւակայու-
թեան յափշտակութիւն-
ները կը փոխանորդէին
պարզապէս արամաբանու-
թեան: Այս ժամանակա-
միջոցը որ գրականութեան
մէջ վիպականութեան (ro-
mantisme) յաղթանակին
ատենն է, մասնաւոր հետք մը ձգած է այն
ատենի դէպքերուն ու զիմագծութեանց վրայ,
զորս կարելի չէ կատարելապէս հասկնալ եւ

մը: Այս յառաջխաղացութեան մնայուն մա-
սը, տեւական յառաջդիմութիւնները մարդ-
կութեան համար, շատ յամրընթաց են, ինչ-

պէս գրեթէ անզգալի է, նմանապէս, ցամաքին աւելնալը մակընթացութիւններու եւ տեղատուութիւններու յաջորդութեանց մէջ, Հանրային կեանք ունեցողները, նշանաւորներէն մինչեւ այն խոնարհ անձերը՝ որոնց փառասիրութիւնը չանցնիր իրենց գիւղին սահմաները, ամենքն ալ շրջապատող պարագաներու ազդեցութեանը ենթակայ, կարելի չէ որ ինքզինքին կատարելապէս ազատած ըլլան ժամանակին ոգւոյն սխալանքներէն։ Քննադատը՝ որ կ'ուզէ դատել զանոնք՝ պէտք է հաշուի առնէ ազդող պարագաները, որպէսզի կարենայ գտնել իւրաքանչիւրին գործունէութեան անձնական մասը, եւ օգուտը որ դուրս եկած է այդ գործունէութենէն։

Մտախօս Մամուրեան, որուն յօդուեանին տօնուելը ապագայ պատճառիւր մեր բարքերուն յառաջդիմութենէն՝ աւելի՛ արքեպիսկոպոսի մը պնդմամբնը պարտի վերագրել, Հայութեան մէջ մէկը եղած է այն գրական գործիչներէն՝ որոնք ներմուծած եւ ծաւալած են ձգտումները հոգեկան տնչերու այն ժամանակամիջոցին, որուն ակնարկեցինք քիչ մը վերը։

Ծնած 1830ին, ուսած Բարիզի մէջ Լուի Ֆիլլիբի օրով, մինչ վեհանձն ձգտումներու անդիմադրելի շունչ մը կ'ոգեւորէր ամբողջ Ֆրանսան, անած Ալֆրէտ տը Միւսէի եւ Լամարթինի բանաստեղծութիւններովը, ժամանակակից այն մեծ յեղաշրջումին զոր Վիքթոր Հիւկո առաջ լերաւ գրականութեան մէջ, ակնատես Աղեքսանդր Տիւմայի, Էօթէն Սիւրի եւ վիպական դպրոցի միւս վարպետներուն յաջորդութեանցը՝ որոնց խօս յափշտակութիւնը ունեցած է միշտ, բնական էր որ Մամուրեանի գործունէութիւնը ներշնչուէր լուր այս պարագաներէն որոնց ուղղակի ազդեցութեանը ներքեւ գտնուել էր եւ որոնք գրեթէ չաղեր էին զինքը։

Այդ ժամանակամիջոցը ֆրանսական գաղափարներու, ֆրանսական քաղաքակրթութեան, ֆրանսական գրականութեան տիրապետութեան աստեղն էր՝ ամբողջ Եւրոպայի մէջ։ Հայերս՝ Միլիթարեաններու շնորհիւր արդէն բաւական ճանչցած ինչ որ հին քաղաքակրթութիւնն ու դասական գրականութիւնը

ունէին իբր թանկագին գանձ, մեր գրական հակումները դարձուցած էինք դէպի Արեւմուտքի նոր քաղաքակրթութիւնը, որուն վարիչը կ'երեւար Ֆրանսան։

Կարեւոր հետազոտութեան մը առարկայ կրնայ ըլլալ այն զօրաւոր ազդեցութիւնը, զոր հանրային կեանքի զանազան ճիւղերուն մէջ ֆրանսական քաղաքակրթութեանը հետեւինիս ունեցած է մեր մտաւորական կեանքին վրայ։ Ժամանակին ոգւոյն բնական հետեւանքն էր անիկա։ Ֆրանսական լեզուին եւ ֆրանսական կրթութեան նախապատուութեանը հետեւանքով, Մամուրեան, Չիլինկիրեան եւ գեռ ուրիշներ կը ներմուծէին մեր մէջ վիպական գրականութիւնը, որուն գլուխ-գործոցներուն մեծագոյն մասը կը թարգմանուէր քանի մը տարուան մէջոցին։

* * *

Կրօնական ոգւով տրուած կրթութիւնը՝ որ ձեռներէցութեան ոգին կը թմրեցնէ ընդհանրապէս ի նպաստ նմանողութեան ոգւոյն՝ շատ նշանակիչ կերպով ազգած է մեր մէջ այդ կրթութիւնը ստացողներուն գործունէութեանը վրայ, Միլիթարեաններու աշակերտներէն սկսելով, Հակառակ իրենց գիւլութեանը, որ անհամեմատաբար աւելի եղած է քան մեր թաղային եւ երկրորդական վարժարաններուն չրջանաւարաններուն, շատ վար գլուխուած են անոնցմէ ձեռներէցութեան տեսակէտով. սակայն ըսել չէ թէ օգտակար եղած չեն անոնք. կանոնաւոր աշխատութեան տիրապետներ եղած են մեծագոյն մասը, հանրային գործունէութեան, ինչպէս սոսկական կեանքի մէջ. անպայման կերպով անձնուէր իրենց ընտրած ճիւղին՝ թանգարաններ կազմելու չափ գիրքեր գրած են, իբր բանաստեղծ, դիտուն, եւ պատմասէր, նախանձելի դիւքերու հասած են իրենց բանգիտութեամբն ու մեթոտական աշխատութիւնովը, երբ հայրային պաշտօններու եւ զանազան հաստատութիւններ վարելու կոչուած են, եւ մեծ մասամբ յաջողած են նոյն իսկ վաճառակոհական եւ գրամագիտական ձեռնարկներու մէջ ալ, իրենց գործերը ընդհանրապէս հաստատուն եւ տեւական եղած են, միշտ կրելով սակայն նմանողութեան դրոշմը որ իրենց

որոշիչ յատկանիշը եղած է : Սակայն բան մը ստեղծելու , նոր բան մը ընելու ձեռնարկէցու-
թիւնը , ընդհակառակը , կրօնական ազդեցու-
թիւնէ ազատ կրթութիւն առնողներու քով
տեսնուած է գրեթէ միշտ :

Մամուրեան , Մխիթարեանց աշակերտ ,
տարբեր ձեւի մէջ միեւնոյն գործունէութիւնը
ունեցած է , ինչ որ ըրած են Բագրատունի ,
Հիւրմիւզ եւ Այաթնեան իրենց վանքերուն
մէջ : Մեթոտական աշխատող մը եղած է ,
լաւագոյն գործաւորը իր ճիւղին մէջ , նմա-
նողութեան տիպար մը՝ որ իւրացուցած է
ոգին ու ոճը իր հետեւած ճիւղին , առանց
սակայն նորութիւն մը բերելու անոր մէջ :

Իր գրական գործունէութիւնը , որ թարգ-
մանութիւններէ կը բաղկանայ մեծ մասով ,
ընտելացման զօրաւոր առիթ մը եղած է ժա-
մանակին երիտասարդութեանը , վիպական
գրականութեան այն զլուխ-գործոցներուն ,
որոնք այն ատենի ոգւոյն մարմնաւորումներն
էին :

Իզմիր՝ մեր լոյսի կեդրոններէն մէկն էր
այն հին ժամանակներուն , եւ Մամուրեան
ու Ջիլիկիրեան մեր զարգացման գործին մեծ
քրմապետներէն երկուքը :

Ու պարզ թարգմանութիւններով կատար-
ուած այդ զարգացումը իր խոշոր նշանակու-
թիւնն ու կարեւորութիւնը ունէր մեր բար-
քերուն վրայ : Յրահուերէնի ընտելացումը ,
որ այնքան յառաջդիմութիւններ ըրաւ վերջին
քառորդ դարուն մէջ , շատ սահմանափակ էր
այն ատեն , եւ զբօսիչ վէպերու՝ ընթերցումը
զարգացման զօրաւորագոյն միջոցը կը համար-
ուէր ժողովրդեան նախնական հիմնական կրթ-
ութիւնէն զուրկ մեծամասնութեանը համար :

1860էն մինչեւ 1885 , քառորդ դարու մի-
ջոցին , արեւմտեան Հայոց մէջ թարգմանուած
վէպերը հատորներու իրաւընէ պատկառելի
թիւ մը կը կազմեն . Իզմիրէ դատ Պոլսոյ մէջ
ալ թարգմանիչներու երամ մը կար , որ մեր
լեզուին կը վերածէր ժամանակին ֆրանսական
գրականութեան կարեւորագոյն արտադրու-
թիւնները . սակայն կարելի է ապահովաբար
ըսել թէ ուղղութիւնը կուգար Իզմիրէն , ուր
կը թարգմանուէին Աղէքսանդր Տիւմաի , Էօ-
սէն Սիւրի , Վիքթոր Հիւկոյի , Տալ մարքի-

զուհւոյն եւ ուրիշ հեղինակներու լաւագոյն
գործերը :

Ու այդ գրականութեան հետ մէկտեղ կը
մատակարարուէին նաեւ երգեմն , ինչ որ կրօ-
նական նկատումներ չէին ներած Մխիթար-
եաններուն հրատարակել , Վօլթէրի վիպակ-
ները , Բրէյլօ քահանային դուխ-գործոցը ,
Անիծեալը , Մօլիէրի կատակերգութիւնները
եւայլն :

Մամուրեան շատ կարեւոր մաս մը ունէր
այս թարգմանութեանց մէջ , որոնց կարեւո-
րագոյնները իրեններն են . Գաղանձ Բարիզի ,
Երեք Հրացանակիրք , Քսան Տարի Ետք ,
Պրաժլոն Դերակոմս , Հազար ու մէկ Գիշեր-
ներ , Իվանօէ , Ամուրիի մը Երազները , Վեր-
թէր , Սիպերիականի մը Յիշատակը եւայլն :
Վերջէն այդ թարգմանութեանց յաջորդած են
Ժիւլ Վէրնի գիտական վէպերէն երկուքը ,
որոնց յաջորդութիւնը «Երեք Հրացանակիրք»էն
ու «Գաղանձ Բարիզի»էն պակաս չեղաւ :

Անուբանալի է որ վէպերու ընթերցման
արդիւնք եղող այդ ինքնագարգացումը՝ որ
կը մտրակէր շարունակ երեւակայութիւնը , ա-
ռանց միեւնոյն համեմատութեամբ աւելցնե-
լու մոքին պաշարը , իր արդիւնքը ունենար :
Այդ տեսակ զարգացման հետեւանքները նկա-
տելի են այդ ժամանակի սերունդին ձեռ-
նարկներուն մէջ , որոնք՝ վառվռուն երեւա-
կայութեան արդիւնքներ՝ վաղանցուկ փայլեր
ունեցած են փոխանակ հաստատ հիմի , եւ
մեծ մասով քմահաճոյքի մը տեւականու-
թիւնը միայն :

Պէտք է խոստովանել սակայն որ այդ վեր-
իվերոյ , հարեւանցի զարգացումը՝ իր ժա-
մանակին կատարած է մոտաւորական կարեւոր
բարեփոխում մը , որուն ազդեցութիւնը զգա-
լի է մինչեւ հիմա :

Եւրոպական արգի քաղաքակրթութեան
առաջին հիւլէներն էին որ մուտ կը գտնէին
այդ վէպերու ընթերցումովը . անշուշտ չա-
տեր կային որ Երեք հրացանակիրներու խօ-
սակցութիւնը կ'ուզէին կեղծել առօրեայ կեան-
քի մէջ , Էօսէն-Սիւրի սիրային հերոսներէն
մէկը ըլլալ կը նկրտէին , կամ վիպական բմ-
բոճումներով արբոյս՝ հիւանդ երեւակայու-
թեան մը զաւանցումներուն մէջ կը տապըլաը-

կէին : Սակայն , ինքնազարգացման այդ կապ-
կային ձեւին յարընթաց , կեանքի ուղղու-
թեան կարեւոր փոփոխութիւն մը տեղի կ'ու-
նենար միւս կողմէ : Այդ վէպերու ընթերցու-
մը նոր ճաշակներ կուտար մեր ժողովուր-
դին , ու եթէ վիպական գրականութեան
սխալ հասկացողութիւնէն առաջ եկած դեղե-
րունները անխուսափելի էին , փորձառութիւ-
նը կամաց կամաց կ'առնէր կը տանէր ինչ որ
անքնական կար այդ ըմբռնումին մէջ եւ միշտ
բան մը կը մնար , շատ անգամ կարեւոր բան
մը , վէպերու ազդեցութեամբ դոյացած զար-
գացումէն :

Այն ատենի Հայերը սկսեր էին իրենց լե-
զուն սիրել , ինչ որ նախապատմական առաւ-
ակը մը պէտք է երեւայ արդի օտարացած
սերունդին . եթէ մեր գրական վերածնունդը
կը պարտինք Վենետիկի , անուրանալի է որ
ժողովրդային ընթերցասիրութեան զօրաւոր
մղումը տրուած է Իզմիրէն , որու գրական
գործիչներուն առաջին կարգին մէջ կը գըտ-
նուէր Մամուրեան : Շատ գիւրիւն է այսօր
վէպերու խակ մաքերու վրայ ունեցած վնաս-
ակար ազդեցութիւնը ձաղկել . սակայն այն
ատեն երբ կարդալու պէտք ոչ ոք կը գնա-
հատէր դեռ հասարակ ժողովուրդին մէջ , չեմ
գիտեր թէ վէպերէ—Աղեքսանդր Տիւմայի, Էո-
սէն Սիւրի , Հիւկոի զուլա գործոցներէն—
գուրա ինչ գիրք կրնար մղել հանրութիւնը
դէպի ընթերցասիրութիւն : Այս տեսակէտով
չատ մեծ եղած է Իզմիրի դերը , իր լաւ ընտ-
րութեանցը , մաքուր թարգմանութիւններուն
եւ արտադրութեանցը աժանութեանը պատ-
ճառով : Կրօնական եւ դպրոցական գիրքերէ
դուրս , Տէաէեան ապարանի հրատարակու-
թիւնները առաջին հատորները եղած են Հա-
յոց մէջ , որոնք առանց վնասի կրցած են
տպագրուիլ . ու ընթերցասիրութիւնէն զօր
ազդած են անոնք՝ օգտուած են նաեւ Վենե-
տիկ ու Վիէննա , որոնց աւելի հիւթեղ եւ
աւելի լուրջ արտադրութիւնները կրնային
ուղղել ինչ որ օգային , երեւակայական կար
Իզմիրի հրատարակութեանց առաջ բերած զար-
գացումին մէջ :

Մամուրեան , որ անխոնջ աշխատողը , վա-
րիչը եղած է գրեթէ այս թարգմանութիւննե-

րու գործին , կարեւոր դեր մը ունեցած է ու-
րեմն ժամանակին հանրային կրթութեանը մէջ ,
առանց ստեղծող մը ըլլալու ինքը , մղուած
միմիայն նմանողութեան ոգիէ մը , որ իր գոր-
ծունէութեան յատկանիւն է :

Այդ դերը իր կարեւորութիւնը ունէր
նաեւ լեզուին յառաջդիմութեանը տեսակէտով :

Աշխարհաբարը , զոր մենք կը գրենք հիմա ,
քիչ կը զանազանի այն լեզուէն , զոր Մա-
մուրեան եւ իր ընկերները՝ Իզմիրի , Զօրայ-
եան , Իւթիւճեան , Ռուսինեան՝ Պոլսոյ մէջ
սկսան գրել , ասկէ քառասուն տարի առաջ :
Սակայն որքան մեծ է տարբերութիւնը եթէ
բաղդատենք այդ լեզուն այն աշխարհաբարին ,
զոր իրենցմէ քիչ մը առաջ գրած են Տէրոյ-
ենց պատուելին , Սէրվիչէն եւ նոյնիսկ շատ
մը դիտական Միթիթարեաններ : Լեզուն հըս-
կայաքայլ կը յառաջդիմէր այդ թարգմանու-
թիւններուն պատրուակովը , որ հազարներով
բառեր հնարուելու , խօսքի դարձուածքներ
ստեղծուելու առիթ կ'ըլլար : Ռոմանդիք գրա-
կանութեան ազդեցութիւնը զգալի է նոյնիսկ
լեզուի այս բարեփոխումին մէջ , որ ուսուցիկ
բառերն ու խօսքի կտրուկ ձեւերը կը նախ-
ընտրէր , ա'Արդանեանի խօսքերուն պէս :
Քերականական տեսակէտով ալ , այդ լե-
զուն զերծ չէր թերութիւններէ , որոնք բնա-
կան են ամէն փոխանցումի մէջ . սակայն
յառաջդիմութիւնը անուրանալի է , եթէ նկատի
առնենք նախադասութեանց կազմութիւնը՝ որ
երթալով կը մօտենար ֆրանսերէնի յստակու-
թեանը , մեր լեզուին օրէնքներուն չյարմա-
րող օտար դարձուածքներու վտարուելով :

* * *

Թարգմանութիւններէ բաղկացած այս գոր-
ծունէութեան քով՝ Մամուրեան հրապարա-
կադիրն ու հեղինակը կը գտնենք Արեւելեան
Մամուլի քսանը—ուրիշ տարուան հաւաքածո-
յովն ու քանի մը ծանօթ հատորներով :

Մամուրեան հրապարակագիրը՝ գեղապաշտ
մը (dilettante) եղած է ամէն բանէ առաջ ,
տեսակ մը աշխարհիկ վանական , որ զէպեա-
րուն փիլիսոփայութիւնը եւ գաղափարները
կը փնտռէ իր սենեակին մէջէն , առանց հանրու-
թեան հետ չփուլելու , առանց անոր մտաւորա-
կան վարիչը ըլլալու : Եւ եւ յաւակնութեան :

Արեւելեան Մամուլը, որ հայոց Րըվիւ sk sho Մօնսը եղած է ատեն մը, կարեւոր տեղ մը բռնած է քսան տարուան մօտ միջոց մը մեր հանրային կեանքին մէջ: Ծառայութիւնը, զոր Մամուրեան մատուցած է այս պարբերականով, միշտ պիտի գնահատուի անոնց կողմէ որոնք անոր ստուար հատորները աչքէ անցնելու հոգը պիտի ստանձնեն: Այդ հատորները մեր աչացը առաջն են այս տողերը դրած ատենինս, եւ բեղուն ուսումնասիրութիւններով, նիւթերու գնահատելի ընտրութիւնով անցուած ամբողջ տարիներ կը գտնենք, որոնք պատուաբեր պիտի ըլլային ֆրանսական կամ անգլիական որ եւ է հանդէսի համար ա'լ:

Հանդէս մը լրագիր մը չէ. եւ օրական հրապարակագրութեան ոչ աւելնն ու հոլորը, ոչ ալ սաստիկ բանախօսութիւններ կը յարմարին իր լուրջ, խոհական բնութեանը: Մամուրեան, ամէնէն հանդարտաբարոյ մարդը թեւեւ իր ժամանակին գրողներուն մէջ, նախաանմանուած էր կարծես մեր լաւագոյն հանդէսը վարելու: Իր գրական գործունէութիւնը այդ հանդէսին մէջ տեսակ մը ընտրողականութիւն եղած է, սիրահար անցակալին գոհարներուն, բարեկամ ամէն ընդունուած յառաջդիմութեան, սակայն խորշացող գրական խիզախ փոփոխութիւններէ՝ երբ դեռ սաղմնային վիճակի մէջ կը ներկայանան անոնք:

Փաղափարի եւ ոճի տեսակէտով, Մամուրեան իր այդ հրապարակագրի դերին մէջ ալ կը ներկայանայ իրր համոզուած բոմանդիք մը: Շատ ասպետականութիւն կայ իր գաղափարները պաշտպանելու ձեւին մէջ, փայլուն դարձուածներու համեմունք, որոնք Ա. Տիւմա կը հօտին: Ասիկա յանցանք մը չէ իրեն համար, քանի որ միեւնոյն ազդեցութիւնը պիտի տեսնէինք եթէ Րըվիւ sk sho Մօնսը կամ որ եւ է ֆրանսական հանդէսի մըն ալ այն ժամանակուան պրակները քննէինք:

Շատ քիչ բան ունինք ըսելու Մամուրեան հեղինակին վրայ, որուն բազմակողմանի հմտութիւնը պիտի գնահատուի անշուշտ իր կրկնակի նամակաւորները կարդացող ամէն բանասէրի կողմէ, առանց սակայն այդ երկու հատորները, գլխաւորները իր հեղինակու-

թիւններուն, անուն մը յաւերժացնելու կարող գլուխ-գործոցներ ըլլալու: Բանասէրի խոկմունքներ եւ պատմական հետազօտութիւններ են անոնք, դատապարտուած միեւնոյն ճակատագրին, ինչ ճակատագիր որ ունեցած են ֆրանսացի ու անգլիացի երկրորդական հեղինակներու այն շատ մը նամակաւորները, որոնց անունը իսկ յիշող չկայ հիմա:

Այդ հեղինակի փառքէն աւելի գնահատելի է Մամուրեանի՝ Իզմիրի մէջ ունեցած մասնաւոր գործունէութիւնը, իրր հրապարակագիր՝ Արեւելեան Մամուլով, որուն տեղական գործերու յատկացում մասը զօրաւորապէս ազդած է միշտ Իզմիրի ազգային կեանքին վրայ, եւ իրր ուսուցիչ՝ Մեսրոպեան վարժարանի տեսչութիւնովը, ուրիշ պատուաւոր եւ ազգին համար պատուաբեր ամբողջ սերունդ մը եղած է:

Այս ուսուցչի դերին պէտք է կցել նաեւ դասագիրքերու եւ գիտական հանրացումի (vulgarisation) տասնի չափ հատորները, որոնք անհրաժեշտ պէտքի մը ծառայած են մեր մէջ: Խնամով պատրաստուած այդ զբոլոյնները որ Առողջաբանութիւն աղօթանց, Բանալի հայ շարադրութեան, Ընդհանուր պատմութիւն, Առեւտրի տեսութիւն, եւլն. անունները ունին, Մամուրեանի գործերուն օգտակարագոյնները եղած են եւ թերեւս ամէնէն տեսականները:

* * *

Ու այս ուսումնասիրութիւնէն ետքը, ընդհանուր ակնարկ մը նետելով այս յիսուն տարուան գործունէութեան վրայ, մեր աչքին առջեւ կ'ունեննանք պարկեշտ ու անաղարտ կեանք անձնուէր աշխատողի մը, որ իր գործը կատարած է կարողութեանը չափով, առանց վայրկեան մը կորսնցնելու իր ժամանակէն, նիւթական եւ բարոյական այլեւայլ դժուարութիւններու հակառակ:

Այս տեսակէտով՝ Մամուրեան հաջողաբար գիմագծութիւն մըն է արգարեւ. եթէ իր կատարած գործը անունը յաւերժացնելու բնութիւնը չունի, գոնէ թմր ամենափոքր հետք մըն ալ չկրեր եւ բոլորովին մաքուր է անիկա: Մամուրեանի անունը ապագայ սերունդին չպիտի անցնի անոր համար որ իր հրապարակու-

գրի եւ ուսուցչի գերերը իր ժամանակէն անդին չպիտի կարենան ազդել . ուրիշներ եղած են, որ իրեն պէս նմանողութեան գերով մը միայն կրցած են իրենց անունը յաւերժացնել ձեւի կամ ոգւոյ եղականութեան մը շնորհիւ : Այսպէս , Պէշիկթաշեան , որուն բանաստեղծութեանց մեծագոյն մասը նմանողութիւններ կամ թարգմանութիւններ են միայն , անմահացած է լեզուին կատարելութեանը , ռասնաւորներուն ներդաշնակութեանը շնորհիւ : Պէշիկթաշեանի անունը կը մնայ անոր համար որ իրմէ բան մը դրած է այդ նմանողութիւն-

ներուն ու թարգմանութիւններուն մէջ : Մասնաւորապէս գործին մէջ շատ քիչ է իւրը , եւ այն որ օտարներունն է , արդէն մոռցուելու վրայ է , ժամանակին եւ գաղափարներու փոփոխութեանցը պատճառով :

Առիկա պատճառ մը չէր որ հանրային յարգանաց չարժանանար այս խղճամիտ ու պարկեշտ աշխատողը , որուն արժանիքը անժըխտելի է եւ որուն կեանքը կրնայ հաստատամիտ աշխատութեան եւ հանրային պարտաճանաչութեան իւր լաւագոյն տիպարը ցուցուիլ :

ԱՐԳՈՍ

ԽԹՈՒՄԻՆ ԳԻՇԵՐԸ

— 330 —



ԱՂԱՔԸ կը հեծէր ձիւնին տակ , որուն բաթիկները բարակ կը մաղուէին՝ երկինքէն՝ անցորդներուն գլխուն : Առաջնորդարանի դռնէն մինչեւ Մայր Եկեղեցիին որմը բռնած էին երկու շարք մուրացիկներու , ցնցոտիներով ու զոդ-զոջուն , որոնք աղաչանքի հեծկտանքով ձեռք կ'երկնցնէին անդադրում , առանց յուսահատելու իրենց ափերուն պարապ ամբոխում մէն : Յիսուսի Ծնունդին տարեւոր նախատօնը նոր եռուզեռ մը ձգած էր ժողովուրդին մէջ , որ ածնական ցուցանքի պնդող գեղատաւարումով եկեղեցի կը վազէր , տեղ մը դրաւելու համար հոն : Խթումի իրիկունան գրակարգաց մանուկները , իրենց պլորած դրքերն հազուադիւս մաղաղաթի գլաններու պէս խղճմտութիւն անութեամբ , հրճուանքի բնազդական գեղումով՝ տարիքոտ մարդերու լրջութիւնը քաշած իրենց երեսին խբենց մայրերու քղանցքին կը կառչէին , չի

կոխկռուելու կանխամտածումով : Այդ շարժուն գունագեղութիւնը , որ Խթումի իրիկունան ոգեւորութիւնը կը յատկանշէր , եւ որուն մէջ հետաքրքիր սրտերը գոտեւորած էին հաւատաւորի թափով , նոր երեւոյթ մըն էր ինծի համար , ինչպէս ես իրենց համար նոր էի : Տարեկան այն օրերուն , ուր կհանքի հատուածակողմը ծիածանին գեղեցկութիւնովը չ'արժաւետիր , նոր հանդիպումսինն ամէնէն բարեբաւարի գուշակութիւնները կը սեպուէին :

Տօնական այդ իրիկունը՝ նորէն՝ կը զարգարուէր Բեթլեհէմի ու Նազարէթի խնկաւետող նարնջածաղիկներով : Ուրախութիւնը ժպիտի վարդեր կ'ուրուագէր ամէնուն գէմքին վրայ , բացի անոնցմէ , որոնք յաւիտեանապէս ինքզինքնին դատապարտուած կը զգան վշտի մշուշներուն : Զրեւադիդակ խաղցող մանուկ-մարդերն անգամ , որոնք բան մը զգալու անարամաղիք մարմին մը ունին , ու ածնական օրերու գալուստը կը սիրեն , միմիայն կերուխումի հանդիսաւոր նուիրագործում մը տեսնելով անոնց մէջ , կը մղուէին այդ կրօնաւորական հոսանքէն , փողոցային խժուուրի տարաամութիւնէն իրենք ալ հարկադրուած անդրադառնալու ժողովրդական այդ ծածանումի պատճառին :

Ձիւնը՝ անցորդներու ոտքին տակ, սկսած էր սպիտանալ մութ ու գորշ պիտակներով :

* * *

Մութ փողոցները՝ ա՛լ ամայացած անցորդներէն՝ կը պսպղային ձիւնի սառած բիւրեղներով : Ժողովուրդը արտօրնօք տուն մտած էր ինքուր սեղանը վայելելու համար : Պատուհանները՝ իրենց իւզոտած թուղթերէն դուրս հեղեղներու պէս լոյս կուտային : Նոյն իսկ մուրացիկները կրցած էին մխիթարութեան բարիքը տանիլ իրենց հետ, վաղուան ողորմութիւնները հաւաքելու ճակատագրական պատրաստականութիւնով :

Տնակ մը միայն՝ պարտէզներու մէկ անկիւնը նետուած՝ չէր կրցած վայելել ինքուր օրհնութիւնը : Իր բնակիչները — կին մը, կոյր հայր մը, եւ տղեկ մը — զիպուածով մոռցուած էին նոյն իրիկունը : Խթումի գիշերը մանաւանդ զգացին անոնք՝ աղքատիկ կեանքի մը ներշնչած բոլոր դառնութիւններէն վերջ՝ իրենց այտերուն վրայ սաք տաք արցունքներու սառիլը : Նուազումի եւ լքումի այդ վայրկեաններուն, կնոջ բեկբեկ ձայնը հագիւ թէ կրնար յուսադրել տղեկը, որ երբեմն կը սարսափար նքթումի իր վրայ թողած դալկութենէն :

Եթէ երբեք զիշերուան ցուրտին՝ մէկը յանդգնութիւն ունեցած ըլլար այդ մոռցուած տնակին շուրջը թափառելու, պիտի տեսնէր քարեսիրտ, մատաղաբաշխ մարդ մը, հեռուոր դրացին այդ մոռցուած հիւղակին, որ Բեթզեմի լեցուն զուարթութենէն մեկուսացած, Մսուրին անշուք տեսքն ունէր, որ դուրս կ'ելլէր իր սունէն՝ իր մեռելներուն յիշատակովը նախադրուած՝ մատաղի ծրարը ընդած ձեռքին մէջ, Մատաղաբաշխը անակը գնաց ուղղակի, առանց մեծ ճիգի հրեց անոր դռնակը, որ փականք չունէր արդէն, մէկ կողմ

դրաւ իր պատրաստած ծրարը, նշմարուիլ չուզողի մը զգուշութիւնով, ու հապճեպով մեկնեցաւ անկէ :

Կինը տեսաւ իր դուռնէն ներս ստուերի մը մուտքը, եւ անօթի տղան՝ առանց յանկարծական շարժումի՝ բնագլխի թելադրութիւնով դէպ ի դուռը նայեցաւ անգամ մը : Կինը՝ ուռած աչքերով՝ քակեց ծրարը, եւ տղեկը՝ ուրախութենէն այլալլած, հիմա հագիւ թէ կը մտածէր քիչ մը առաջ դրան բացուածքին, մութին մէջ իր տեսած շարժուն ստուերին, եւ ա՛յն ձեռքին վրայ, որ անունդի այդ ճօն ծրարը կը բերէր իրենց : Աչազուրկ հայրը, իր տղուն հարցումներուն պատասխանած ըլլալու համար ըսաւ անոր .

« Տղա՛ս, Յիսուս ծնաւ մսուրին մէջ . հրեշտակները աւետիս տուին դաշտի հովիւներուն, որոնք դէպ ի մսուրը վազեցին Յիսուսը տեսնելու, եւ իրենց հետ ոչխարներ իբր ընծայ տարին անոր, Յիսուս այդ ոչխարները մատաղ ընել տալով զրկեց մեզի պէս աղքատներուն, որպէս զի մենք ալ ուրախանաք իր Ծնունդին օրը : »

— Հա՛յրիկ, ամէն օր պիտի զրկե՞մ .

— Չէ՛, տղաս, ի՛ր ծնած օրը միայն :

* * *

Ու Ծնունդի առտուն, երբ պզտիկը կու գար մուրալու՝ ժամուն դուռը, իրեն պէս մուրացիկներու կը պատմէր դաշտի հովիւներուն նուէրը, եւ մանկական հետաքրքրութիւնով կը հարցնէր անոնց .

— Այս գիշեր ձեզի ալ միս ու հաց զրկե՞ց Յիսուս :

Իր բախտակից ընկերները չէին կրնար բան մը հասկնալ այս հարցումէն, որուն մէջ խորունկ վշտի մը անթեղումը խառնուած կար թունդ ուրախութեան, մանուկներու անամպ ու պարզ հաւատքէն բղխած :

ՄՈՒՇԵՂ ՎԱՐԴԱՊԵՏ



Ա Ն Ո Ւ Ր Ձ



Ն՝ որ իմ սերս ուներ երեկ,
Հապալսի պէս էր քրիսագոյն,
Ա՛յ չըտեսնեմ պիտի երբեք
Զայն որ իմ սերս ուներ երեկ,
«Հոգւոց» կարդանք անոր հոգւոյն,
— Ան՝ որ իմ սերս ուներ երեկ,
Հապալսի պէս էր քրիսագոյն:

Ան՝ զոր վաղիւ պիտի սիրեմ,
Թուիս կամ քումայք ըլլայ, չէ փոյթ:
Ո՛վ որ ճամբան ելլէ ինձ դեմ,
Ես գայն վաղիւ պիտի սիրեմ,
Պիտի բանամ դուռս իրեն շուտ:
— Ան զոր վաղիւ պիտի սիրեմ,
Թուիս կամ քումայք ըլլայ, չէ փոյթ:

Ան՝ զոր սիրեմ պիտի ես յար
Ոսկերիք է անուրջի պէս,
Մեր անըսպառ սիրոյն համար,
Ան՝ զոր սիրեմ պիտի ես յար,
Կը սպասե ետքն ինձ ցաւերես:
— Ան՝ զոր սիրեմ պիտի ես յար,
Ոսկերիք է անուրջի պէս:

ԱՌՄԱՆ ՍԻՆՎԵՍԴԻՐ

Ա Ջ Ք Ե Ր Ը



ԱՊՈՅՏ աչքերն ըսին. «Սերն է երկնարոյս.
Աստուածային է սեր, լուրքն է երեքին.
Եթէ մեկնիս կը կենամ. գաս, կու տամ խոյս.
Ամէն սեր սուտ է և սին»:

Կանանց աչքերն ըսին. «Կոհակ մըն է կին,
Սերն հեզնող է, սերն է փոփոխ, անկայուն.
Կանանց աչքը սիրել խարտեաշ պարելին՝
Սիրտն հեղձանել է իսկոյն»:

Իսկ սեւ աչքերն քնն ըսին. «Զնա րադձար դուն
Սեւ գոհարին վառուիլ անշեջ բոցերով.
Եթէ կ'ուզես ճանջնալ, օրհնել կեանքն ողջոյն,
Մեռիք՝ ըզմեզ սիրելով»:

Թարգմ. ՍԻՊԻԼ

ԺԱՆ ԷՔԱՌ

ՎԱՐՂՆՆԵՐԱՅՆ(*)



ԵՆՈՒԵՏՍԿԱՆ երկինքին տակ շատ ու շատ են գեղազուարճ տեղեր, իրարմէ գերազանց անմահական դրախտավայրեր, որոնք հանրածանօթ են արդէն ասոնցմէ է Վարդընշթայն, որ մեր մէջ քիչ լսուած է. ֆրանսերէն կամ գերմաներէն կը գրուի այն Wartenstein. անոր ճիշդ հնչումն է՝ վերը գրածս. բայց երբեմն ալ կը հնչուի Վարդընտայն, վարդաստանի մը գաղափարը յանկարծ ծնելով, զայն արատաւանող Հայու մը միտքին մէջ:

Ռակածի ամէնէն նշանաւոր տեղն է Վարդընշթայն. ի՞նչ որ է բարձրադիրն Կիւճ՝ Լիւզէնի համար, բարձրաբերձն Ապէնտպէրկ՝ Էնթէնլաքընի համար, Քաճէնպէրկը Վիէնայի համար, Կիսպէրկը Սալցպուրկի համար, Լիւթլիպէրկը Յիւրիխի համար, այն է Վարդընշթայնը Ռակածի համար,—այդ զաւարակտ ձորադաշտին, որ Հելուեփայի Սէն-Կալ նահանգին մէջ, աւստրիական սահմաններուն մօտ, Թամիսա եւ Ռէն գետերու մէկ տեղաին վրայ կառուցուած քաղաքիկ մըն է, հանգրուան՝ Անկատին եւ Իտալիա

(*) Ծ. ի. — Անակնկալ մը պիտի ըլլայ անշուշտ Մասիսի ընթերցողներուն համար որոնք Տորթ. Թորգոմեանի անունը կարդալով՝ ուսումնասիրութիւն մը կամ կենսագրական մը կը սպասէին, եւ ուղեւորական նոթեր կը գտնեն. իմրագրութեանս կողմէ յայտնուած փափագի մը վրայ է որ բանասէր բժիշկը այս պէսպիսութիւնը ընծայեց իր նախասիրական նիւթերուն մէջտեղ, խոստանալով՝ յառաջիկային համար՝ շահեկան ծանօթութիւններու շարք մը Կ. Պոլսոյ կայս. բժշկական ընկերութեան հիմնարկութեան եւ այդ Թուականէն ի վեր անոր անդամակցող հոյ բժիշկներուն կատարած աշխատութեանցը վրայ: Մասիսի յառաջիկայ թիւերէն մէկուն մէջ պիտի հրատարակենք նաեւ Վարդընշթայնի գեղազուարճ տեսարաններէն մէկուն պատկերը:

երթեւեկող բաղմաթիւ Անգլիացիներու, Ֆրանսացիներու եւ Գերմանացիներու:

Ռակածի հարաւակողմը ցից լեռի մը կուշտին վրայ շինուած է Վարդընշթայն, ծովէն գրեթէ 800 մէր, իսկ դաշտէն 275 մէր բարձր. իր անունը առած է, իրմէ քիչ հեռուն սեպածեւ ժայռի մը վրայ 13րդ դարուն կառուցուած Վարդընշթայնի բերդաղղեակէն, որուն աւերակը կը մնայ այսօր:

Հիսուքանչ տեղ մըն է Վարդընշթայն. լոին եւ խաղաղ տեղ մը, ուր ոտքով կիւլուի մէկ ժամէն, կառքով գրեթէ երեք քատորդէն, իսկ լարածիգ (funiculaire) երկաթուղով 10 վայրկեանէն:

Մշտադալար եղեւիններու քաղցրաբոյր անտառի մը մէջէն հարթուած ճամբաներ են որ կը հանեն Վարդընշթայնի բարձրաբերձ սահարայթը, ուր ձօն պանդոկ մը ատնջարան է գացողին:

Ի՞նչ խելակորոյս բարձրութիւն, Աստուած իմ, ի՞նչ տեսարան. վարը Ռակածն է, որ իր հիանալի շէնքերով, երեւելի պանդոկներով ու գեղեցիկ ծառաղիններով թուղթի վրայ դնուած փոքրիկ պատկերի մը պէս կը պարզուի, ձախ կողմը ունենալով Թամիսա գետը, որ տհաճագոյ շտապիւններով փրփրադէզ կը վազէ, եւ աջ կողմը Ռէն գետը, որ հեղիկ ու հանդարտ կը հոռի կը սուբայ, հեռուն գէպի հիւսիս դաշտերուն մէջ միանալու Թամիսային եւ անոր հետ գիրկընդխառն տարածուելու Ռէնի ընդարձակ հովտին մէջ:

Երկնաբերձ եւ ամպածրար լեռներու դօտիններ են շուրջանալի, որ կը պաշարեն Վարդընշթայնը, յօրինելով անոր ատամնաւոր հօրիզոն մը: Արեւելքէն գէպի հիւսիս, Ֆալքնիս լեռներու հսկայ շղթան է, որուն նշանաւոր գագաթներն են Վիլան եւ Քլէքթօպը 2566 մէթր բարձրութեամբ, եւ որոնց ուղղութեամբ գէպի հարաւարեւելք կը նշմարուին Տալլոսեան անուանի լեռները:

Հիւսիսէն գէպի արեւմուտք, Կոնգըն լեռները 1883 մէր բարձր, որոնք համալաւ

ւոր են իրենց երկաթի հանքերով , եւ որոնց ստորոտը զրախտատեսիլ ընդարձակ դաշտի մը մէջ շինուած է Սմբկանս աւանը , իր նշանաւոր կայարանովը , ուրկէ Հելուեան երկաթուղիները այլեւայլ կողմեր կը ճիւղաւորին :

Հիանալի ամփիթատրոն մը կը ներկայացնեն այս ամէնքը իրենց պատկառելի բարձունքներով , հովանուտ անտառներով , գեղեցիկ գիւղակներով , սիրուն այգիներով , դալարազարդ դաշտերով , թարմ մարգագետիններով , եւ ասոնց մէջէն արագ արագ սողացող անհամար շոգեկառքերով : Քանի՜ բանաստեղծական է զիտել այդուն այգուն այս լեռները , երբ անոնց ձիւնապատ ծիր գագաթները պայծառ երկինքի մը տակ , արեւին սկզբնածագ ճառագայթներով սկսին ոսկեգոյն նկարուիլ : Աւելարդ գլուխներ են կարծես , որոնք հնազնեալէ կը բարձրանան , ուսերնուն վրայ կրելով երկայն ու լայն կանանչ վերարկունքներ , զորս կը յօրինեն անոնց կուշտերուն վրայ մեծցող դարաւոր եղեւիններու խիտ անտառները . հաճոյատեսիլ պատկերներ , երփներանգ ակնախաղ տեսարաններ , որոնք վայրկեանէ վայրկեան կը փոխուին , միշտ աւելի գեղեցիկն , միշտ աւելի հաճոյականին տեղի տալով :

Հիասքանչ տեղ մըն է Վարդընշթայնի բարձունքը . առողջապահական եղական վայր մը օգտասուն եւ հովասուն , ուր մարդ կարծես թէ աշխարհի բոլոր մտածումներէն հեռու , հեռու նսեւ աշխարհէ , միմիայն բնութեան սքանչելիքներով կը զբաղի , միմիայն բնութեան խորհրդաւոր լուսթեանը հետ կը խօսակցի , միմիայն սոխակներու , սարեակներու երգերովը կը յափրանայ . հոն ապրեցայ ես անհետացած օգոստոսին , քսան օրի չափ , եւ թերեւս առաջին Հայ հիւրերն եղանք մենք այդ գագաթին :

Շամիրամեան օգակառոյց զրախտիկ մըն է Վարդընշթայն , ուր պանդոկ մը միայն կայ , բաղկացած երկու դշակիկներէ զորս՝ պողատու ծառերով լի պարտէզներ , ամրոտական ծաղիկներու եւ յարափթիթ վարդերու բուրաստաններ , քաղցրաբոյր անտառակներ կը պատեն չորսդիէն : Ինչ կեանք կը վայելէ հոն մարդ եւ ինչ առողջութիւն :

Վարդընշթայնի հարաւը ամրողջապէս պաշարած է Գալանտա կոչուած 2808 մէդր բարձր լեռնագագաթին , եւ հարաւ-արեւմուտքը կրտու Հօրնրք ամպածրար լեռնաշղթան , ուրուն մէկ լայն պատառուածքին մէջէն է որ անագին զգրդիւններով գահավէժ կը հոսի Ռակաձի Թաւինա գետը , եւ այդ պատառուածքին մէկ մուծ խորութեան մէջն է որ կը բլխին Ֆէյֆըրեան հանքային տաք ջուրերը , որոնք Ռակաձի համբաւը , հարստութիւնն են , եւ որոնք Թաւինա գետին պաղուկ ու զով եղերքներն ի վար , փայտէ խողովակներու միջոցաւ ժամ մը ճամբորդելով , առանց իրենց 30 աստիճան տաքութիւնը կորսնցնելու , կու գան հոսիլ Ռակաձի բոլոր պանդոկներուն մէջ :

Վսեմ ու խորհրդաւոր է Վարդընշթայն լուսնի լուսով . լեռներ , հովիտներ , անտառներ , գետեր , գիւղեր , քաղաք , լուսաւոր մթութեան մը մէջ իրարու խառնուած , տարբեր ու անբացատրելի գեղեցկութեամբ մը կերեւան հոնկէ . մարդ բոլորովին կը վերանայ , եւ ա՛լ երկրի վրայ չի կարծեր ինքզինքը :

Ամէն անոնք , որոնք ջրաբուծութեան համար Ռակաձ կերթան , հազարաւորներ թուով , մայիսէ մինչեւ հոկտեմբեր , կեղեն Վարդընշթայն , եւ շատերը հոն կը բնակին , լեռնային օդով իրենց կուրծքը պարարեղու : Անու՛չ եւ քաղցր օդ մը կը շնչէ մարդ հոն , 20 կամ 30 օր չա՛տ ու չա՛տ բաւական է , որպէս զի յոգնած միտք մը , տկարացած անարիւն մարմին մը , խանդարուած ջգային դրութիւն մը , չուտով կազդուրուի եւ վերջնաւոր իր նախկին առողջութիւնը : Հօգ կերթան ամէն տարի Ռումանիոյ արքայական ամուրները . հոգ եկիւր էր անցեալ տարի Քառմէն Սիլվա , իր քնարը Ռակաձի ջուրերուն եղերքը հանգչեցնելու , եւ իր երազները Վարդընշթայնի քաղցրասիւզ գեփիւններուն զգուկ տալու :

Վարդընշթայնի բարձրութեան մէջ ապրելով , չուտով կը զգայ մարդ , թէ ինչ տեսակ օդ կը ծծէ , օդ համակ օգոնով լի , որ չունչին առը եւ տուրը տարբեր կանոնաւորութեան մը մէջ կը դնէ , սրտի շարժումներուն նոր ուժ մը կուտայ , ստամոքսի ու մարսողութեան վրայ հրաշալի կերպով կ'ազդէ , եւ

ամբողջ ջգային պրոլետան մէջ կենդանարար բան մը ծաւալելով, նորաստեղծ վիճակ մը կուտայ մարմնոյն : Բարձրագոյն տեղեր բնակիլ, բարձրութիւններու անապակ ու ջինջ օդը միշտ շնչել, ո՞չ ապաքէն արդի բժշկութեան հրաշագործ պատուէրն է :

Ռակածն ու Վարդընշթայնը շրջապատող ձիւնազգեստ լեռներուն, ինչպէս նաեւ բոլոր Ալպեան լեռներուն վրան է որ կը փթթի շաւրունակ, Հելուեախայի մէջ եւ ամէն տեղ

շաւտ սիրուած ծաղիկն ետըլիայն, ձիւներու անշէջ աստղիկն էտըլվայս, դօր ամառն ի բուն փունջ փունջ կը ծախեն Ռակածի մէջ : Էտըլվայսն անմեռ, էտըլվայսն անմահ, երկնաբերձ գաղաթներու վրայ բուսնելով, առողջապահութեան լուռ խրատատու մը չէ՞ միթէ, ըսել իմն ուղեւոր թէ, բարձր տեղ ապրելով մարդ առողջ կ'ապրի, բարձր օդի մէջ ապրելով մարդ շաւտ երկար կ'ապրի :

ՏՈՔԹ. ՎԱՆՐԱՄ Յ. ԹՈՐԳՈՍԵԱՆ

Բերա, 2 Յունվար 1900

ԱՄՍԱԹԵՐԹ ՄԸ ԻՆՉՊԵՍ ԿԸ ԽՄԲԱԳՐՈՒԻ (ԱՄԵՐԻԿԱՆ ԲԱՐՔԵՐԷ)



ՄԵՐԻԿԱՆ պատկերազարդ հանդէս մը, The Cosmopolitan, իր գոյութեան ցամաքորդ սարին քեւակոխելուն առօրէ՛ հետաքրքրաւոր մանրամասնութիւններով լեցուն յօդուածի մը մէջ կը պատկերէ իր հիմնադրութեան եւ յաճախուն կերպով ստացած ծաւալման ու զարգացման պատգամները զորս շահեկան կը համարին քերականացնել մեր ընթերցողներուն :

Այս քաղաքային հրատարակութիւնը քերես առիթ տալով մեզի՝ Մասիսի յաջորդ քիւլերէն մեկուն մէջ նկարագրելու քե... մեր մէջ ինչպէ՞ս կը խմբագրուի ու կը հրատարակուի պարբերական հանդէս մը : Ասով, հարկ չկայ ըսելու, մեկ ծայրէն միւսը անցած պիտի ըլլանք, անագին անջրպէտ մը կտրելով, բայց մեր լրագրական կեանքի ներքին կողմերուն մեկ ուրուագիծը յանձնած պիտի ըլլանք այս եջերուն : Խօսքը The Cosmopolitanի խմբագրութեանն է ուրեմն այս անգամ .

Այն միջոցին ուր The Cosmopolitan իր

տաններորդ տարին կը թեւակոխէ, թերթին ներկայ բարգաւաճ վիճակը արդարացուցիչ պարագայ մըն է մեզի համար՝ քանի մը խօսք ընկելու մեր այն գործունէութեան վրայ որով մեր հանդէսը տիրացած է իր այսօրուան դիրքին : Մանաւանդ սա նկատումն ալ ունինք որ հանդէսի մը ընթերցողները իրաւամբ պէտք է հետաքրքրուին թէ ինչպէ՞ս ընթերցանութեան համար իրենց ընտրած հանդէսը տալիս բարգաւաճելու վրայ է . քանի որ հանդէս մը ուրիշ բան չէ բայց եթէ ձեռնարկութիւն մը ընկերակցութեան մը կողմէ, որուն մէջ ընթերցողները կարեւոր տեղ մը կը գրաւեն :

Ինչ տարի առաջ բովանդակ Մ. Նահանգներու մէջ հրատարակուող հանդէսներուն ընդհանուր սպառումը շատ չէր անցներ The Cosmopolitanի ներկայ սպառումի թիւէն : Պատկերազարդուած երեք գեղեցիկ ամսաթերթեր բռնած էին ամբողջ հրապարակը, եւ այն ժամանակ ամերիկեան ժողովուրդը կը հպարտանար որ գրականութեան այս ճիւղին մէջ ինքը Անգլիացիներէն առաջ անցած է : Բայց այս թերթերէն իւրաքանչիւրին ձեռքէ դնելու

25-35 սէնդ (6 $\frac{1}{2}$ -8 $\frac{1}{2}$ զրշ.) , արգելք մըն էր այդ ամսաթերթերուն ամէն դասակարգէ ան- ձերու մատչելի ըլլալուն :

Երբ մեր հանդէսը սկսաւ հրատարակուիլ , ամբողջ հրապարակը այդ երեք թերթերը գրա-ւած էին արդէն : Բայց Քօզմօքօլիթքենը նորէն յաջողեցաւ ընթերցողներու այնքան թիւ մը շահիլ , որ եթէ ոչ երկրորդ , դոնէ երրորդը կ'ըլլար բոլոր ամսաթերթերուն մէջէն : Այդ միջոցներուն , մեր թերթը քաղաքին մէջ զետե-նուած տպարանի մը վարձքով տպել կուտա-լինք : Երբ տակաւ մեր սպառումը կ'աւելնար , թերթին հիմնադիրներուն մաքին մէջ ծնունդ կ'առնէր սա գաղափարը թէ՛ թերթին համար մասնաւորապէս կազմակերպուած տպարանա-կան հաստատութիւն մը պէտք էր , ուր բոլոր մեքենաները պիտի շինուէին ուղղակի թերթին պէտքերուն զոհացում տալու համաձայն : Այս մտադրութենէն տարի մը վերջ , գաղափարը արդէն իրականութիւն կը դառնար եւ 1893ի սկիզբէն The Cosmopolitan կը սկսէր հրա-տարակուիլ իր յատուկ տպարանէն , որ ամէն կերպով յարմարցուած էր թերթին հրատարա-կութեանը եւ կը կազմուէր նմանապէս իրեն յատուկ կազմատան մէջ : Մասնաւոր տպարան եւ կազմատուն ունենալէ առաջ եկած խնա-յողութիւնը անմիջապէս ուրիշ հարցումի մը ծագում կուտար : Կարելի պիտի ըլլա՞ր թեր-թին սպառումը 300,000ի հասցնել , եթէ գինը 25էն 12 $\frac{1}{2}$ սէնդի իջուցուէր , առանց բովան-վանդակութենէն առկա մը պակսեցնելու : Ման-րաման հաշիւներէ յետոյ վերջապէս կ'որո-շուէր թերթին գինը կէս առ կէս գեղչել : Եւ գինի այս գեղչը տարակոյս չկայ որ առիթ կուտար միւս ամսաթերթերուն որպէս զի The Cosmopolitanը քննադատէին ըսելով որ ա-նիկա ամսաթերթերու մինչեւ այսօր ընտրած ճամբէն կը շեղի : Այս քննադատութեանց հակառակ , գինը գեղչելու մասին բազմաթիւ հետեւողներ կ'ունենայինք մեզի : Ամսաթերթ մը մինչեւ անգամ 10 սէնդի կ'իջեցնէր իր ձեռքէ վաճառման գինը : Քօզմօքօլիթքենն ալ հետեւելով այս վերջինի օրինակին , այս ան-գամ 12 $\frac{1}{2}$ սէնդէն 10ի կ'իջեցնէր իր գինը , ինչպէս արդէն կը կանխատեսուէր , գիններու այս $\frac{3}{5}$ գեղչը նոր շարժումութիւն մը կու-

տար ամերիկեան ամսաթերթերուն որոնք կը սկսէին ժողովուրդին համար դաստիարակիչ կարեւոր գեր մը ստանձնել , ամէն մարդու մատ-չելի ընթերցանութեան միջոցներ դառնալով :

Հաւագոյն կերպով խմբագրուած ամսա-թերթ մը երբ միայն 10 սէնդի փոխարէն կը մատուցուէր ժողովուրդին , այս վերջինը՝ գնա-հատելով եղած զոհողութիւնը՝ ամիջական կերպով ցոյց կուտար իր աջակցութիւնը , գնելով 10 սէնդի փոխարէն իրեն ներկայացուած ամսաթերթերը : Այս աջակցութենէն ամէնէն աւելի կը նպաստաւորուէր The Cosmopolitan, եւ իր սպառման արագ բարձրացումը կը հարկադրէր ձեռնարկուները , որպէս զի թեր-թին նիւթական կազմակերպութեան մէջ ե-ղած դիւրութիւնները եռապատկէին : Ըն-դարձակ յարկերով չէնքի մը պակասը կը զգացուէր , եւ անմիջական փոխադրութիւն մը անհրաժեշտ կը դառնար : Միեւնոյն ատեն , նկատողութեան կ'առնուէին փոխադրութեանց յարմարութիւնները եւ լոյսի ու ընդհանուր խնայողութեան կատարելագործումը : Այս առ-թիւ , սակայն , նոր խնդիր մըն ալ կը ծագէր , ինչո՞ւ համար պաշտօնեաները հարկադրուած պէտք էին ըլլալ , մեծ քաղաքի մը կեանքին աննպաստ պայմաններուն տակ ապրելու , աչ-խատելով պզտիկ ու գէշ կերպով լուսաւորուած վայրերու մէջ , բնակելով անհովասուն փողոց-ներ , տան համար բարձր վարձքեր վճարելով , եւ իրենց տղաքը աղմկոտ ու խռնուած դպրոց-ներ խրկելով :

Այս բոլոր խնդիրները նկատողութեան առ-նելով , թերթին վարչութիւնը 20 արտաւար տարածութեամբ հող մը կը գնէր , որ Նիւ-եօքք քաղաքի բուն իսկ կեդրոնէն երկաթու-ղիով միայն 35 վայրկեանի հեռաւորութիւն ունէր , եւ որ կը նայէր Հոցըն գետի ջուրե-րուն վրայ , ճիշդ այն տեղը ուր գետը լայն-նալով կը կազմէ Թափանի լիճը :

Կառուցուելիք շէնքին յատակագիծը պատ-րաստուելով կը յանձնուէր երեք ճարտարա-պետներու որոնք կարճ ժամանակի մէջ կ'ա-ւարտէին զայն՝ իր ընդարձակ բաժանումնե-րովը : Այս շէնքը ունի 279 սոսք երկարութիւն եւ 76 սոսք լայնութիւն : Հարաւ-արեւելեան անկիւնը , թանձր որմով մը չորպատտուած ,

յատկացուած է մեքենաները շարժման մէջ գնող հնոցին եւ կաթսաներուն : Եւեքարօտիպի բաժանումը կը գտնուի երկրորդ յարկը, պատկերներու փորագրութեանց մասը երրորդ յարկը եւ լուսատպագրական (photo-engraving) բաժանումը չորրորդը :

Քսանդմէկ վիթխարի մամուլներ կը գրաւեն շէնքին ամբողջ առաջին յարկը : Կադմատունը կը գտնուի երկրորդ յարկին վրայ եւ վարչական, խմբագրական ու տեսչական սենեակները հաստատուած են երրորդ յարկին մէջ : Թերթին վարչութիւնը բոլոր աշխատութիւնները քաղաքին կեդրոնէն հեռու տեղ մը, Այրվինկզըն փոխադրելով՝ կը տիրանար հետեւեալ առաւելութիւններուն : Նախ, կարելի կ'ըլլար լաւագոյն պաշտօնեաները ունենալ, մանաւանդ ընտանիք ունեցող պաշտօնեաներու համար Այրվինկզըն ամէնէն հաճելի վայրն է՝ պարտէզով շրջապատուած իր շէնքերովը, որոնց համար տրուած վարձքը հազիւ կը հասնի քաղաքներու մէջ գտնուած արաւթըմաններու նեղ ու մութ յարկերու վարձքին : Որ եւ է խմբագիր կամ պաշտօնեայ, քանի մը վայրկեանի մէջ կրնայ իր նախաձաշի սեղանէն աշխատութեան զուլթը գրտնուիլ, որով այլեւս աւելորդ կը դառնայ առաւօտուն սովորականէն կանուխ ելլել, ու կէս կամ մէկ ժամուան ճամբորդութիւնը երկաթուղիով, թրամուշէով կամ չոգենաւով : Յետոյ, խմբագիրը կամ պաշտօնեան կէսօրուան ճաշը կրնայ տունը ընել, եւ իր աղաքը ամէնէն աւելի առողջ շրջապատի մը մէջ է որ կ'արթննան, Կեանքի այս առաւելութիւններով, կեանքին վայելքը կը մեծնայ եւ նոյն իսկ իր աշխատութեան ժամերը կ'անցնին օգտաւն եւ լաւ կերպով լուսաւորուած վայրերու մէջ, որով աշխատութեան վերջն ալ, ոչ թէ ընկճուած, այլ կեանքը վայելելու գուարթ արամագրութեամբ մը կը բաժնուի իր գործատեղիէն, հետեւեալ օրը ուրախութեամբ հօն վերադառնալու մտադրութեամբ : Այսօր, արեւելութիւնը գրեթէ անձանօթ մնացած է The Cosmopolitanի աշխատաւորներուն : Յետոյ, մեր ամսաթերթին բոլոր պաշտօնեաներուն ստացած գումարը, քաղաքի մէջ նոյն կերպով աշխատողներու ստացածին հա-

ւասար ըլլալով, մերինները նոյն գումարով քաղաքի մէջ ապրողներու ստացածին կրկինը առած կ'ըլլան :

Մեր նոր շէնքը նոյն իսկ թղթատարական գործատեղի մըն ալ է : Թղթատարական վարչութեան պաշտօնեան կուգայ՝ երբ ամբողջ վախն մը արդէն լցուած է եւ պատրաստ ճամբայ ելլելու : Այսպէսով, թղթատարական վարչութեան համար ալ աշխատութեան եւ ժամանակի խնայողութիւն մը կ'ըլլայ, ընդամէնը կէս միլիոն լիպրա ծանրութեամբ մեր թերթերը նորէն կշռելու պէտք չի մնալով, քանի որ մեքենական կազմակերպութեամբ կը կատարուի ամէն ինչ : Ինչպէս թղթատարական առաքումներու առեւն, նոյնպէս ալ ստացումներու համար կարելի եղած է ամէն քան կազմակերպել, ամէնէն կարճ ժամանակի կորուստով եւ ամէն գիւրին աշխատութեամբ :

Վերջապէս այս առթիւ կան տակաւին կարգ մը խնայողութիւններ, ապահովագրութեան, մեքենաներու կազմութեան, հողի գինին եւ ուրիշ պայմաններու մէջ, զորս կրնանք ամփոփել հետեւեալ կերպով .

Բեռերու փոխադրութենէ	2300
Հողի գինին վրայ	6000
Մեքենաներուն ամբաշէն գետնայարկերու վրայ հաստատուած ըլլալէն	3000
Ապահովագրութենէ	2000
Հասած բեռերուն՝ շէնքին մէջ փոխադրուելէն	2000
Տօլար	15300

Եւ ասիկա տակաւին մօրոյժ խնայողութիւնը չէ, զոր ամէն տարի The Cosmopolitanի վարչութիւնը կ'ունենայ՝ իր աշխատութեանց կեդրոնը քաղաքէն դուրս, նպատակաւոր շէնքի մը մէջ փոխադրած ըլլալուն հետեւանքով :

Անոնք որ The Cosmopolitanի նոր սկսած առեւնները կ'աշխատակցէին թերթին բարգաւաճմանը համար, կազմած էին մարմին մը որ ամէն շաբթու կը հաւաքուէր խմբագրութեան սենեակին մէջ : Այս մարմինն «Դատապարտող ընկերութիւն» անունը տրուած էր, իր հաւաքումներուն նպատակը ըլլալով թերթը

հասարակութեան ներկայացնալէ առաջ քննադատութեան ենթարկել : Նոյն իսկ միտալ մը սահմանուեցաւ այդ մարմինն կողմէ այն ամօձին համար , որ արդէն խմբագրուած թերթ մը ամէնէն սուր կերպով պիտի քննադատէր , եւ այս ամէնը անոր համար որ վերջին թիւին մէջ գործուած սխալ մը յաջորդ թիւի մը մէջ նորէն չկրկնուէր : Այս մարմինն պաշտօնը թէեւ ինքնին շատ հաճելի չէր թերթը խմբագրողներուն համար , բայց այդ պարագան արգելք մը չեղաւ որ իր հաւաքումները ամէնէն աւելի հաճելի հաւաքումները ըլլային : Այս մարմինն քննադատութիւնները ոչ միայն նպատակ ունէին որ թերթը դրականապէս լաւ խմբագրուած ըլլար , այլ մանաւանդ կը պահանջէին որ թերթը իր ընթերցողներուն օգուտ մը տայ :

Մինչդեռ մէկ կողմէ ամէն ճիգ կը թափուէր , որպէս զի The Cosmopolitan ամբողջ աշխարհի մէջ ճանչցուէր , միւս կողմէ իր բովանդակ գործունէութիւնը կը կայանար՝ լաւագոյն գաղափարները եւ լաւագոյն գրական ու գեղարուեստական արտագրութիւնները իր ընթերցողներուն ներկայացնելուն մէջ : Թերթին ամէն մէկ էջին վրայ կարելի էր տեսնել նկարագրի առնականութիւն մը , մերձաւորին սէրը կեանքի իմաստասիրութեան մէջ , օգտակարը հանրային գործերու մէջ :

Աշխարհի ամէն կողմերը մեր Հանդէսը ունեցած է իր աշխատակիցները որոնք ամբողջ աշխարհի մէջ անցած դարձածի մասին , ըլլայ անիկա մեծ մտածման մը արտայայտութիւնը , հմայիչ գրական ներշնչում մը , կամ գեղարուեստական առկուծ արտագրութիւն մը , միշտ օրը օրին հաղորդած են թերթի ընթերցողներուն :

Եւրոպայի մէջ ընդհանրապէս այն կարծիքը կայ թէ Հանդէսներու հրատարակողները իրենց գրական շրջանակները ունին , մեծ մասով հրատարակողին անձնական բարեկամներ , եւ թէ այս վերջիններուն ձեռագիրներն են որոնք միշտ հրատարակման շնորհին կ'արժանանան : The Cosmopolitanի համար այս հաճախատարութեան գրութիւնը սոյնութիւն չունի :

* * *

Ոստիկէ վերջը այն բոլոր պարագաներուն վրայ որոնք մեր ամսաթերթի տասը տարուան գործունէութիւնը կը յատկանշէին , անցնինք

քիչ մըն ալ ապագայի մասին մեր ունեցած արաջադրութիւններուն : Դիւրութիւններու հետզհետէ աւելնալէն եւ մեր թերթին ամէն կողմ գտած ընդունելութենէն վերջը , չափազանց բան մը չպիտի ըլլար յուսալը որ արդէն չուտով մեր սպառումը պիտի կարենայինք 1,000,000ի բարձրացնել , բան մը որ կը նշանակէ 5 000,000 ընթերցող :

Իր սպառման տարուէ տարի բարձրանալովն է որ The Cosmopolitan այսօր տարին 14,000 ձեռագիր յօդուած կը ստանայ — ճանադարձորդական յօդուածներ , ընկերական-քաղաքական ուսումնասիրութիւններ , ուրուագիծներ , նորավէպեր , եւլն , եւլն . — : Ուրիմ որքան զժուար միեւնոյն ատեն գնահատելի աշխատութիւն մըն է այդ 14,000 յօդուածներուն մէջէն ճիշտ ընտրութիւն մը կատարել՝ թերթին ամբողջ տարուան բովանդակութեանը համար , որ 150էն 200 յօդուածի մէջ կը կայանայ :

Հանդէս մը խմբագրելը պարզ աշխատութիւն մը չէ : Այս աշխատութիւնը այնքան խառնուած է ընկերութեան , նոյն իսկ ընդհանուր մարդկութեան գործերով որ կարճ ժամանակ վերջը թերթին սնորհներ արդէն կը տեսնէ որ ուրիշներուն հասարակութեան գործերը իրն ալ են : Անճիշդ կերպով ընտրուած նոյն իսկ բառ մը , որ միլիոնաւոր ընթերցողներ ունի , կրնայ իր սխալ հետեւանալը ունենալ , ուրիմ որքան աշակրթութիւն պէտք է միանայ ճիշդ ըմբռնումին հետ , երբ ժողովրդական հանդէսի մը բովանդակութիւնը կը պատրաստուի :

Դժուար է ճշգրիտ թէ ժամանակակից քաղաքակրթութեան մէջ Հանդէսները ինչ քաղաքակրթիչ դեր մը ստանձնած են : Օրաթերթ մը խիստ յաճախ իր հրատարակուած տեղին հանրային կարծիքին պէտք է հետեւի յաջողելու համար : Բայց Հանդէսի մը համար միեւնոյն պայմանները գոյութիւն չունին : Հանդէս մը օրաթերթիքէն շատ աւելի սահմանուած ըլլալով մուտք ունենալ աշխարհի ամէն մասերուն մէջ , տեղական պայմանադրական նկատումներէ ազատ է :

Այս տեսակ ըմբռնումով խմբագրուած հանդէսներն են որոնք ազգի մը մամուլին ամէնէն կենսական մասը կը կազմեն :

ԸՆԴՀԱՏՈՒՄԸ ԵՐԳԸ

(ՆՈՐԱՅԻՆ ԳԵՂ)



ԵՄ գիտեր ինչո՞ւ, իրական կեանքէ նորավէպ մը գրել ուզած պահուս, միտքս կ'երթայ դէպ ի շատ դեռատի աղջիկները ու քսան տարիքը չթեւակոխած աղաքը որոնց սիրային պատմութիւնները, իրենց միա միտ պարզութեանը մէջ, անկեղծ ու բնական բան մը ունին, — հովուերգական, թերեւս, չատերուհի համար ու շահեկանութենէ զուրկ. — բայց աւելի՛ տաք ու աւելի՛ խորունկ կերպով զգացուած զգացումներ, որոնց չպիտի կրնար հաւասարիլ է՞ն տարիտ կնոջ ու է՞ն խելայեղ երիտասարդին սրտի յարաբերութիւնը, իր երանութիւններուն կամ դառնութիւններուն մէջ:

Այդ «հովուերգութիւն»ներէն մէկուն տեղեկանալու առիթ ունեցայ քանի մը տարի առաջ, անխորհրդապահութեան մը շնորհիւ ուրկէ փնաս մը չէր գար: Աղքատ աղու մը պատմութիւնն էր ասիկա, — տանըվեց տաբեկան պատանիի մը, որ օր մը յանկարծ, սրտին բարախելը զգացեր էր իրեն տարեկից աղջկան մը համար, բաւական ունեւոր ընտանիքի զաւակ՝ որ ինքն ալ համակրանք մը ունեցեր էր անոր վրայ: Օքթավ Ֆէօյնէի Ադրաս երիտասարդի մը վեպը կարգացե՞ր էին թէ ոչ, չիմացայ, բայց իրողութիւնը սա էր որ լսին մտերմութիւն մը, նայուածքի խօսունութիւն մը հաստատուած էր այդ հագուած սքուած օրիորդին ու մաշած բաճկոնակով աղուն միջեւ. քիչ անգամ կը հանդիպէին իրարու, կիրակի օրերը, փողոցին մէջտեղ, բայց այդքանը կը բաւէր իրենց խեղալ

երանութեանը համար: Հաճոյակատար բարեկամուհիներ չեն պակսիր, ինչպէս գիտենք, նոյն իսկ պզտիկներու աշխարհին մէջ, մէկ կամ միւս կողմին դիւրութիւն մը ընծայելու, խորհրդակից ըլլալու համար. եւ Եզուարդ ու Սաթենիկ օգտուելով այս տեսակ միութեան-կապէ մը, սկսան նամակներ փոխանակել իրարու հետ, — անկիւնի փերեղակէն գնուած զարդարուն թուղթի վրայ գրուած սիրատոմսեր որոնց ամէն մէկ բառը երկչուութիւն մը, չիկնոտութիւն մը կը մտանէր: Խոչ կրնային ըսել արդէն իրարու այդ երկու մանուկ հոգիները. անարուեստ, անսեթեւեթ խօսքեր միայն, զուտ եթերային, ապագայի յաւիտենական երազը որ այդ տարիքէն կը սկսի՝ երբէք չիրականանալու համար, բայց որ մինչեւ արդուն հասակը, սիրային դառնութիւններու, յուսախարութիւններու մէջտեղ, կը պահէ բոլոր թոժած վարդի մը կեանքի էջերուն մէջտեղ մոռցուած:

* * *

Եզուարդ, պատանեկան շնորհալի դէմքի մը կը միացնէր աղուոր ձայն մը զոր լսելու առիթ ունեցեր էր Սաթենիկ հարսանեկան հանդէսի մը մէջ ուր եկած էին ժամուն «ձայնաւորները». այդ ներդաշնակ երգուածքը այնքան խորունկ ազդեր էր իր վրայ, եւ ոսկեթել թաւիչէ շապիկը այնպէս մը լուծած կեր էր խեղճ աղուն հագուածներուն հիւնութիւնը, որ աղջիկը մոռնալով թէ ընկերային սանդուխին տարբեր աստիճաններուն վրայ կը գտնուին, բոլորովին անոք երեւակայութեամբ յափշտակուեր էր: Այդ գիշերէն ետքը, իր նայուածքին մէջ մտերմութիւն մը եւ իր քայլուածքին մէջ խոնարհութիւն մը կար որոնք ըսել կ'ուզէին կարծես. «Քու աղքատութիւնդ փոյթս չէ» — առանց, ի հարկէ, հաշուի առնելու ծնողքին ընդդիմութիւնը,

եթէ երբէք օրին մէկը համարձակէր «բաց-
ուիլ» իր մօրը կամ հօրաքրոջը : Տղան , սա-
կայն , իր անփորձութեանը մէջ , աւելի դի-
տակցութիւնը ունէր իրականին , եւ կ'ըմբռնէր
թէ իր արհեստաւորի մը զաւակ ըլլալը , իր
կարկանդակը կօշիկները , իր պանիր-հացէ
բաղկացած ցորեկուն ճաշերը ուշ կամ կա-
նուխ պատուար մը պիտի ըլլային իր եւ Սա-
թենիկի միջեւ . կը մտածէր միայն թէ , անոր
արժանի ըլլալու միակ միջոցն էր իր ընկեր-
ներէն աւելի աշխատել , ապագայի մը պատ-
րաստուելու համար . ու զպրօցին մէջ , իր
եռանդը կը կրկնապատկէր . իրեն համար ,
էականը , իր չքաւորութեան աստիճանը ծած-
կելն էր հիմա , եւ իրիկունները , ուշ առնն , երբ
կ'երթար գնումներ ընել մօրը համար , ստուերի
մը պէս կ'անցնէր պատերուն տակէն , քովընտի
փողօցներէ , որ չըլլա՛յ թէ Սաթենիկին հան-
դիպի , տողաւոր ձեռքը : Դիպումը մը
տակնուկայ ըրաւ իր պատանեկան բոլոր
հաշիւները :

* * *

Սովորութիւն ունէին , ուրիշ աղքատ «ձայ-
նաւոր»ներու հետ , իմիւսի գիշերները մէկ
քանի հարուստ տուներ պտտիլ՝ երգելու եւ
պզտիկ նուէրներ հաւաքելու համար : Ան տա-
րին ուր այս սէրը կը բողբոջէր իր սրտին մէջ ,
նախ մտածեց չմասնակցիլ խումբին , հպարտու-
թեան զգացումով մը սէրը կը թելադրէր .
բայց ի՞նչ արդարացիութիւն հօրը առջեւ .
եւ յետոյ , Սաթենիկ հետեւ կը բնակէր , շատ
հետուն , գիւղին մէկ ծայրը ուր ինքը չպիտի
երթար : Ու երեք ընկերներ , որոնցմէ էն
պզտիկը լատանքը , քանի որ էր , անձրեւին
տակ սկսան իրենց չրջադաշտութիւնը , Վար-
ժուած էին անտառներու մերձակներու
եւ հազուադէպ կ'երթային առատաձեռն նուէրի
մը . այս պայտը պզտիկ բազմախաղ մըն էր
իրենց համար , ամէն Զատիկի ու Ծնունդի .
այս անգամ , ձախտապրային դժբաղդութիւն
մը եղաւ Եգուարդին համար : Վայելուչ երե-
ւոյթով տան մը զանգաղը երկու անգամ հըն-
չեցնելէ ետքը , ինքը՝ իր ընկերներէն աւելի
լսելի ու աւելի անուշ ձայնով մը կ'երկարա-
ձգէր «Ծնաւ Բրիստոս եւ յայտնեցաւ . . . »ը ,

երբ դուռը բացուեցաւ ազմարից եւ երկու
սիրուն օրիտրոյներ՝ ուրախ գուարթ՝ երեւցան
լուսաւոր բակին մէջաւղ , — մէկը տանը
ազջիկը ու միւսը իր հօրը . . . Սաթենիկը :

— Քիչ մըն ալ երգեցէք , աղա՛ք , ըսին
երկուքը մէկանց , այդ մեղամաղճառ մեղի-
ղին աղաւորութենէն յաիշտակուած , քա-
ռորդ մէճիտ մը կարկառելով Եգուարդին ,
որ յանկարծակիի եկած , Սաթենիկը իր դէմ
տեսնելով , ետ ետ գնաց , կծկուեցաւ իր ըն-
կերներուն ետին , դողահար , նուազելու վի-
ճակի մը մէջ : Բայց տեսնուած էր անգամ
մը : Առանց ետին նայել համարձակելու , ա-
ռանց բան մը ըսելու իր ընկերներուն , առաւ
քաղց ցեխին մէջէն , գողի մը պէս , մոլար
քայլերով , ու տուն ապաստանեցաւ՝ յանկար-
ծական հիւանդութիւն մը պատրուակելով իր
հօրը :

Սրահին մէջ , ուր վայրկեան մը խօսակ-
ցութեան նիւթ եղաւ ձայնաւոր աղօց երգը
ու անոնց ողորմուկ տեսքը , լուռ ու արտուժ
մնաց Սաթենիկ , ինքն ալ գլխու ցաւ մը
պատրուակելով : Այդ գիշերէն ետքը , ի զուր
փորձեց անգամ մը տեսնել Եգուարդը , գտնէ
ըսելու համար թէ կը կարեկցէր իր վրայ .
անկարելիի եղաւ . խեղճ աղուն Ծնունդի գի-
շերը Լացի գիշեր մը եղեր էր . քանի մը օր
տենդ ունեցաւ , յետոյ , ա՛լ ոչ զպրօց գնաց
ո՛չ ձայնաւորութիւն ըրաւ , Դերձակի մը
խանութիւն աշկերտութեան մասաւ , ուր օրն
ի բուն՝ ասեղ ծեծելով՝ իր մատաղ սրտին մէջ
կը ճնշէր գառնութիւնը առաջին սիրոյ մը , —
որ ընդհատուած էր իմիւսի գիշերուն իր
դողբոյն երգին հետ :

ՏԻՎԱՆ ԱՐՓԻԱՐԵԱՆ

«ՄԱՍԻՍ»Ի ՅՈՒՆԱՏԵՏՐԸ լատուիկայ թիւէն սկսելով
իր տեղը պիտի ունենայ վերջին 1-2 էջերուն մէջ : Այս
անգամ , Ծնունդի տօնելը , անոնց ալ դադար տուին , ինչ
պէս տուած են Պատրիարքարանի ժողովներուն :

Արժանատի Կ. Ս. ԻԻԹԻԻՃԵԱՆ

Տպագրութիւն Ե. ՄԱՏԹԵՈՍԵԱՆ

Թիւ 27, Ֆինանսըլար Եօզուշու , Կ. Պոլիս

ՏՈՔԹ. Ե. ՄԱՍԻՍ, բժիշկ եւ մասնագէտ ջղային տկարութեանց, ստամոք-
սի, աղեաց հիւանդութիւններու, ծննդամիջական եւ գաղղիական ախտերու: Բերա,
Թագսիմ փողոց, թիւ 10, ամէն օր կէս օրէ վերջը:

ՏՈՔԹ. Ն. ԹԻԻԼԵԱՆ, բժիշկ-մանկաբարձ, հաստատուած է Մաքրիքէօյ,
Սաղըզ Աղաճ, Արդարեան զեղարանին դէմը: Հիւանդ կ'ընդունի ամէն օր (երեք-
շաբթի օրերը՝ կէս օրէն վերջ ձրի): Երկուշաբթի եւ ուրբաթ օրերը, ցորեկէն ետքը
կը դանուի Սամաթիա, իր նախկին բնակարանին քով: Կը դարմանէ ամէն տեսակ
հիւանդութիւններ եւ կը կատարէ վիրաբուժական գործողութիւններ մեծ ճարտա-
րութեամբ:

Ի Ի Ն Ի Օ Ն

ԱՊԱՅՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Հիմնուած 1828—1829 ին



ԵՐԱՇԵԱՒՈՐՈՒԹԻՒՆ ՀՐԴԵՅԻ ՃԻԻՂԻՆ
97 Միլիոն

ԵՐԱՇԵԱՒՈՐՈՒԹԻՒՆ ԿԵՆԱՅ ՃԻԻՂԻՆ
137 Միլիոն

Ընկերութեան գրամատունն է
ՕՍՄ. ԿԱՅՍ, ՊԱՆԲԱՆ

Թուրքիոյ եւ Պաւլկարիոյ Տնօրէն
Սիմոն Էֆ. Քալսեղեան

Կենաց ճիւղին տեսուչ
Միհրան Էֆ. Տէր Ներսիսեան

Կ. Պոլիս, Կալաթա, Թահապուրուն խան
Օսմ. Պանքային դէմ

ԿՐԿՆՆՈՒՆՈՒԻՆ

ԿՐԿՆՆՈՒՆՈՒՆ

ՆԱԿԱՅՆՆՈՒՆ

« Մ Ա Ս Ի Ս » Ն Ո Ւ Ի Ր Ո Ղ Ն Ե Ր

Բերայի Թաղ. Խորհուրդի գանձապետ Թաղէօս Էֆ. Էքմէքճեան մէյ մէկ օրինակ
Մասիս նուիրած է Բերայի Էսաեան վարժարանին եւ Օրթագիւղի Ս. Թարգմանչաց
վարժարանին:

ԿԻՍԱՄՍԵԱՅ ՄԱՍԻՍԻ 1899Ի ՏԱՐԵՇՐԱՆԸ, 608 կրկնասիւ-

նակ էջերէ բաղկացած, ճօխ բովանդակութեամբ, իրր ամբողջական հատոր մը թղթակազմ հրապարակ ելած է եւ կը ծախուի ամէն գրաւաճառի քով: Կեդրոնառեղին է Յ. ՄԱՏԹԷՈՍԵԱՆ Տպարան: Գինն է 40 զրշ: Գաւառներէ ուղղոները պէտք է 5 զրշ: աւելի վճարեն իրր թղթատարի ծախք:

ՔէՅԻ

ԽԱՌՆՈՒՐԴՆԵՐ

ամէնէն դժուարահան նաւակներն անգամ գոհացնող:

ԵԱՎՐՈՒԵԱՆ

ԵՒ

ԻՍԱԳՈՒԼԵԱՆ

թէյի խառնուրդներ

ԱՌՈՂԶԱՊԱՀԱԿԱՆ

ըլլալու յաւելութիւնը



Եալիուեան եւ Իսագուլեան թէյի խառնուրդներու վաճառատունը կը գտնուի Կ. Պօլիս, Ճէլալ պէյ խանին տակ, թիւ 10:

Ուշադրութիւն վաճառատան մարտային

Յ. ՄԱՏԹԷՈՍԵԱՆ

ՏՊԱՐԱՆ-ԿԱԶՄԱՏՈՒՆԸ

Յառաջիկայ տարւոյ շրջանին մէջ իւր գրատունը զանազան օդ տակար հրատարակութեամբ ճօխացնել ձեռնարկած ըլլալուն առթիւ, ընթերցասիրաց կը յանձնարարէ արդէն հրատարակած հետեւեալ գրեանքը, որոցմէ սակաւաթիւ օրինակներ միայն մնացած են:

ԱՌՁԵՌՆ ԲԱՌԱԳԻՐՔ

ՀԱՅԵՐԷՆԷ ՖՐԱՆՍԵՐԷՆ

Բ. ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

Եօրինեց ԿՈՄԻՏԱՍ ՈՍԵԱՆ

Քառձնէ 25 Ղրշ. Գեղեցիկ լաթակազմ 27 Ղրշ

ԽՈՐՀՈՒՐԴՔ ՀԱՒԱՏԱՅԵԼՈՅ

Բ. ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

ԻՄԱՏԱՍԻՐԱԿԱՆ ՀԵՂԵԱԳՈՒԹԻՒՆ

ՅԱԿՈՒ ՄԱՏԹԷՈՍԵԱՆԻ

Գին 10 Ղրշ.

ԱՌՏՆԻՆ ՏՆՏԵՍՈՒԹԻՒՆ

Գրեց Յ. Վրդ. ԷՍՏԷՐԵԱՆ

Գին 3 1/2 Ղրշ.

THE INTERNATIONAL BROKER

(Մանուցում)

Այն բոլոր վաճառականները, նաւորդները, խուզարկուները, հնարիչները, առեւտրական մարդիկը, կալուածատէրները եւ մասնաւոր անձեր որոնք գնելու կամ ծախելու բան մը ունին, ինչպէս տուն, շինութեան տեղ, հողեր, հանքային հորեր, գործարաններ, առեւտրական տուններ, բաղէնդներ կամ զանազան ապրանքներու ծրարներ, մեքենաներ, եւայլն, ինչպէս նաեւ այն տեսակ մարդիկ որոնք կ'ուզեն ուրիշի մը հետ ընկեր ըլլալ կամ ընկեր մը կը փնտռեն: Կատալոգութիւններու, առեւտրական գործառնութիւններու, սենտիքաներ եւ ընկերութիւններ կազմելու եւ կամ թէ առեւտրական որ եւ է գործ մը աշխարհիս որ եւ է մէկ մասին մէջ կատարելու համար, պէտք է որ կարգան, բաժանորդ գրուին (տարեկան 2 շիլին) եւ ազդարարութիւններ տան վերը յիշուած նպատակներէն միոյն համար, կամ պատասխանեն եղած ծանուցումներու որոնք կը հրատարակուին The International Brokerի մէջ. հասցէն II, Southamton Row, London W. C.